ՄԻՔԱՅԵԼ Ե. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(9 օգոստոսի, կիրակի, 1998 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո»:
«Որդեակ, թող քեզ ներվեն քո մեղքերը»:
(ՄԱՐԿՈՍ Բ 5)

Այս տողերը վերցված են Մարկոսի Ավետարանի այսօրվա ընթերցվածից, որտեղ պատմվում է Հիսուսի կյանքի հետ կապված ամենահետաքրքիր եւ ամենահատկանշական դրվագներից մեկը: Հիսուս մտնում է մի քաղաք, մտնում է մի տուն՝ քարոզելու, եւ ժողովուրդը հավաքվում է՝ լսելու Աստծո խոսքը:

Բոլոր կողմերից դեպի Հիսուս են գալիս ոչ միայն Աստծո խոսքը լսել ցանկացողներ, այլեւ անդամալույծներ, բորոտներ, կույրեր՝ բուժվելու, մաքրվելու, տեսողություն ձեռք բերելու: Սա այդպիսի մի անդամալույծ են բերում Հիսուսի մոտ, եւ քանի որ բազմությունը շատ մեծ էր, չեն կարողանում մոտենալ Հիսուսին, բարձրանում են տանիք ու անդամալույծին պարաններով իջեցնում Հիսուսի առջեւ: Հիսուս, տեսնելով թե՝ անդամալույծի եւ թե՝ նրան բերողների հավատքը, դառնում է դեպի անդամալույծն ու ասում. «Որդյակ, թող քո մեղքերը քեզ ներվեն»: Իր շուրջը եղած դպիրներից ոմանք գայթակղվում են՝ մտածելով, թե ինչպես Հիսուս, որ իրենց առջեւ կանգնում է իբրեւ մարդ, կարող է մեղքերին թողություն շնորհել, որի իրավունքն ունի միայն Աստված:

Հիսուս, իմանալով նրանց մտքի խորհուրդը, շրջվում է դեպի նրանց եւ ասում. «Ինչո՞ւ եք այդպես մտածում, ո՞րն է ավելի հեշտ՝ անդամալույծին բժշկե՞լը, թե՞ մեղավորի մեղքերին թողություն շնորհելը»: Եվ որպեսզի տեսնեն եւ իմանան, որ Մարդու Որդին իշխանություն ունի մեղքերին թողություն տալու, ասում է անդամալույծին. «Բարձրացիր, վերցրու քո մահիճը եւ գնա քո տուն»: Անդամալույծը բոլորի աչքի առջեւ վեր է կենում իբրեւ առողջ մի տղամարդ, մահիճը դնում իր ուսերին, որի վրա տարիներ շարունակ պառկած էր, եւ գնում է դեպի իր տուն:

Այս պատմությունը բազմիցս լսել եւ կարդացել ենք: Այս պատմության վկաներն ենք եղել մեր ընթերցումով եւ ունկնդրությամբ, սակայն հիմնական մեկ ճշմարտություն երբեմն մոռացել ենք մեր նախորդների նման, գուցե եւ մոռանան մեր հաջորդները, եւ դրա համար եկեղեցին մշտանորոգ դողանջի պես զգուշացնում եւ հիշեցնում է ամենքին, որ Աստծուն մոտենալու հիմնական մղումը եւ նպատակը պետք է լինի ոչ թե հարստություն ստանալը, ոչ թե սոսկ բժշկություն ձեռք բերելը, ոչ թե դիրքի ու փառքի հասնելը, այլ ամենանվիրականն ու ամենահիմնականը՝ մեղքերի թողություն ստանալը: Աստծուն յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալ մոտենում է մեղքերի թողություն ստանալու նպատակով: Այս է հիմնական գաղափարը, որ Հիսուս Իր այս

ավետարանական պատգամով մեզ է փոխանցում: Եթե ողջ Ավետարանի մեջ նայենք, կտեսնենք, որ Քրիստոսի ամենահիմնական առաքելությունը անդամալույծներին բժշկելը չէ, կույրերին տեսողություն տալը չէ, կաղերին քայլելու իրավունք եւ շնորհ տալը չէ, թեեւ այդ ամենը անում է եւ առավելով է անում, այլ Քրիստոսի առաքելության հիմնական նպատակը, Իր մարդեղության արտահայտման եւ խաչ բարձրանալու հիմնական նպատակը մարդկանց մեղքերին թողություն շնորհելն է, մարդկանց մեղքի գերությունից ազատելն է, մարդկանց երկնքի արքայություն տալն է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ բացակայությունը մեղքի: Ըստ այդմ, մարդ պարտավոր է Աստծուն մոտենալ իր մեղքերի համար թողություն ակնկալելով եւ խնդրելով, եւ այս անելով նա խնդրած ու ակնկալած պիտի լինի ոչ այլ ինչ, եթե ոչ երկնքի արքայությունը: Ինչպես Ավետարանի մեջ է ասվում, թե նախ եւ առաջ խնդրեցեք երկնքի արքայությունը, եւ մնացած ամեն բան ձեզ ավելիով կտրվի եւ տրվելու է:

Սիրելի հավատացյալ եղբայրներ եւ քույրեր, մենք ժառանգորդներն ենք Տիրոջ այս խոստման, որ Աստծուն յուրաքանչյուր մոտեցող, յուրաքանչյուր Աստված փնտրող ստանալու է մեղքերի թողություն, եւ այդ է լինելու այն ճանապարհը, որով մարդ ընթանալու է դեպի երկնքի արքայություն: Այսօր էլ մենք, ինչպես 2.000 տարի առաջ Քրիստոսին շրջապատող մարդիկ, հաճախ եկեղեցուն մոտենում ենք, եկեղեցի ենք մտնում աշխարհային ակնկալություններով ու մոտեցումներով. ոմանք դիրք են խնդրում, ոմանք՝ հարստություն, ոմանք՝ իրենց մտերիմների ու հարազատների համար այլեւայլ բարիքներ, եւ շատ հաճախ մոռանում են ամենահիմնականը խնդրել Աստծուց՝ խնդրել մեր եղբայրների, մեր քույրերի, մեր ողջ ժողովրդի համար մեղքերի թողություն: Յուրաքանչյուրս մեղանչական եւ մեղավոր մարդիկ ենք, յուրաքանչյուրս կամա թե ակամա մեղքեր ենք գործում ոչ միայն մեր նմանների հանդեպ, այլ ինքներս մեր, մեր կոչման, մեր նվիրումի հանդեպ, մեր մեջ եղող Աստծո պատկերի հանդեպ եւ, հետեւաբար, ամենահիմնականն ու ամենաէականը մեղքերի թողություն խնդրելն է Աստծո Սուրբ Խորանի առջեւ: Մարդը որքան էլ մեղանչական, նույնքան էլ հակումը եւ կարողությունը ունի այդ մեղքից ձերբազատվելու եւ մեղքից մաքրված Աստծո առջեւ մաքուր ու անարատ կանգնելու: Քրիստոս Իր առաքելությամբ ցույց տվեց այդ ճանապարհը, որ հնարավոր է ապրել առանց մեղքի, ոչ թե սոսկ մեղք չգործելու իրականությամբ, այլ մեղքը գործելուց հետո զղջալու, ապաշխարելու եւ այդ մեղքի համար թողություն ստանալու իրականությամբ:

Սիրելի եղբայրներ եւ քույրեր, այսօր մեկ անգամ եւս լսեցինք Ավետարանի այս սքանչելի դրվագը, եւ մեկ անգամ եւս մեր սրտի ու մտքի խորքում թող արմատանան այն հավիտենական, քրիստոնեական ճշմարտությունները, որոնցով ապրել են մեր հայրերը եւ որոնցով փորձում ենք ապրել մենք: Աստծո Սուրբ Սեղանի առաջ մենք՝ հոգեւորականներս, ողջ ժողովուրդը, եկեք խնդրենք Աստծուց մեր եւ մեր նմանների մեղքերի թողությունը եւ մեր հոգու ներսում լսենք Աստծո՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկնառաք խոսքը. «Որդյակ, թող ներված լինեն քեզ քո մեղքերը». ամեն: